

**Ազգային գաղափարախոսությունն առաջընթացի հիմնակետ**

**Մարգարյան Սուրեն Թ.**

*պ.գ.դ., պրոֆեսոր, առաջատար գիտաշխատող, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ (Երևան, ՀՀ)*  
[sargsyansuren@yandex.ru](mailto:sargsyansuren@yandex.ru)

**EDN: SLTHYR**

Նոր տարի է սկսվել: Այսինքն, պետք է թերթենք 365-էջանոց նոր գիրքը և էջ առ էջ լրացնենք այն: Լավ կլինի, որ խաղաղ, հանգիստ ու ստեղծագործ էջերն ավելի շատ լինեն, ազատ ու անկախ Հայրենիքում մանուկների ճիչն ու աղմուկը, նվաճումների բերկրանքը և անախ ուրախությունը՝ գերակշռող: Կարծում եմ, որ բոլորս էլ անկախ տարիքից, սեռից ու բնակվելու վայրից, ոչ միայն ցանկանում ենք, այլև երագում ու մշտապես ապրում ենք մեր «Մեծ երագն» իրականացած տեսնելու ցանկությամբ:

Իսկ ի՞նչ է հարկավոր դրա համար և ո՞րն է դեպի այն տանող ճանապարհը:

Ճանապարհներն իհարկե բազմազան են ու բազմատեսակ: Միանշանակ ու վերջնական պատասխաններն էլ դժվար է գտնել, սակայն մեզ՝ հայերիս համար հստակ է ու թիվ մեկ պատասխանը՝ **միավորվել ու համախմբվելն** է: Իսկ ավելի պարզ՝ հզոր բռունցք դառնալն ու մեր բոլոր թշնամիներին արժանի պատասխաններ տալը: Բնականաբար հարց է առաջանում. իսկ ո՞րն է այն հիմնագաղափարը, որի շուրջ բոլորը կհամախմբվեն: Կարծում ենք՝ **ազգային գաղափարախոսությունը (այսուհետև՝ ԱԳ)**: Գիտատեսական բացատրություններից ձեռնպահ մնալով նշենք, որ այն ստեղծվել է դարերի խորքում: Յուրաքանչյուր ժողովուրդ պատմության հարթակ իջնելու պահից, որպես հիմնական խնդիր, ձեռնամուխ է եղել իր գոյապահպանման համակարգի ստեղծմանը, որն ստացել է «ազգային գաղափարախոսություն» անվանումը: Հետևաբար հայոց ԱԳ-ն էլ հին է այնքան, որքան հայ ժողովուրդը: Դարերի ընթացքում հայոց ԱԳ-ն աշխարհաքաղաքական գործոնների փոփոխմանը զուգընթաց լրամշակվել է և դարձել մի ամբողջական համակարգ: Այդ գործում առանցքային դեր են կատարել երեք խոշոր ազգային գործիչներ՝ Մովսես Խորենացին, Նիկողայոս Ադոնցը և Գարեգին Նժդեհը: Այն հայ ժողովրդի ինքնապահպանման բնագոյն է՝ հիմնավորված աշխարհաքաղաքական, պատմական և այլ բազմաթիվ ընդհանուր ու առանձնահատուկ բնույթ ունեցող կարևորագույն գործոններով: Միայն այն ժողովուրդները կարող են գոյատևել և իրականացնել իրենց ազգային իդձերը, որոնք ունեն պատմության փորձից բխող, գիտականորեն հիմնավորված ԱԳ, որն ստեղծում է ազգային մտավորականության ընտրանին:

Աշխարհի բոլոր ժողովուրդներն էլ ունեն իրենց ԱԳ-ն: Սակայն այն տարբեր ժողովուրդների մոտ, պատմության թելադրանքով, արտահայտման տարբեր ձևեր ունի և պայքարի առաջին պլանում՝ տարբեր հիմնախնդիրներ: Այն ժողովուրդները, որոնց նկատմամբ պատմությունն անարդար է գտնվել, որոնք կորցրել են իրենց Հայրենիքը կամ Հայրենիքի մի մասը, որպես կանոն, իրենց ԱԳ-ի հիմքում առաջին հերթին դնում են Հայրենիքի ազատագրության հարցը: Ահա՛ թե ինչու հայերի ԱԳ-ն պատմականորեն ստացել է Հայկական հարց, Հայ դատ և Պահանջատիրություն անվանումները, որը նշանակում է կորցրած Հայրենիքի ազատագրում: Կարճ ասած՝ ԱԳ-ն գաղափարների և տեսակետների համակարգ է, որն արտահայտում է քաղաքականության և հասարակական գործունեության սուբյեկտների վերաբերմունքը տվյալ ազգին բնորոշ ընդհանրական հոգեկերտվածքի, մշակույթի, լեզվի, ավանդույթների ու սովորույթների, կենցաղի, ինքնության ու ինքնագիտակցության պահպանման և հարատև գարգացման նկատմամբ:

Նկատենք սակայն, որ դարերի ընթացքում մենք այդպես էլ չհստակեցրինք ու լիարժեք չմշակեցինք մեր ազգային գաղափարախոսությունը: Ասել է թե այդ դաշտն ազատ մնաց, հենց որի պատճառով էլ լրացվեց այս կամ այն նվաճողի՝ իրեն հարմար ԱԳ-ներով: Այստեղից էլ ևս մեկ կարևոր հարց է առաջանում. **արդյո՞ք ժամանակը չի**, որ հայոց բոլոր կարող ուժերը համախմբվեն, մշակեն ու հստակեցնեն հայ ժողովրդի ԱԳ-ն: Քանզի կասկածից դուրս է, որ այն կնպաստի ինքնիշխան պետության գոյատևմանը: Իսկ ինքն իրեն պաշտպանելու ընդունակ, արժանապատիվ և ինքնիշխան պետություն ունենալու համար մեզ հարկավոր է ժամանակակից չափանիշներին համապատասխան կրթական համակարգ, դինամիկ զարգացող բարձր տեխնոլոգիական տնտեսություն, ռազմարդյունաբերական կայացած համալիր, հզոր բանակ և հատուկ ծառայություններ: Այսպիսի արդյունքի հասնելու համար հարկավոր է համահայկական ամբողջ ներուժի համախմբումը: Այդ ներուժի՝ Հայաստանի պետականության շուրջ համախմբման միջոցով է հնարավոր դա անել, և այն կդառնա մեր պետականության առաջընթացի խթան և երաշխավոր: Իսկ այս գործնական խնդիրը ձևակերպելու համար մենք պետք է կարողանանք հստակեցնել մեր ազգային հայեցակարգը,

գաղափարախոսությունը, տեսականը, որը համազգային համաձայնություն կձևավորի մեր ազգային արժեքների, նպատակների ու ռազմավարության շուրջ: Նշենք, որ այս պարագայում խոսվում է ոչ թե առանձին-առանձին քաղաքացիական պաշտպանության ազգային հայեցակարգի, հայկական հարցի լուծման հայեցակարգի կամ ազգային անվտանգության հայեցակարգի մասին, այլ ընդհանուր՝ հայոց ազգային հայեցակարգի մասին:

Պատմության տարբեր փուլերում ԱԳ-ն որոշակի փոփոխությունների, շտկումների ու լրացումների է ենթարկվում: Վերանկախացման արշալույսին խոսելով այդ մասին ակադեմիկոս Լ. Խուրշուդյանն զգուշացնում էր. «Անցման շրջանում պատմությունն առաջ է քաշել մի շարք չափազանց կարևոր հիմնախնդիրներ, որոնց լուծման գործում հայ ազգային քաղաքական միտքը սխալվելու իրավունք չունի, քանզի սխալվելը հավասարազոր է կործանման»: Սակայն մենք սխալվեցինք, որի արդյունքն էլ մերօրյա անհասկանալի վիճակն է: Մենք անտեսեցինք այն կարևորագույն հիմնակետը, որ ԱԳ-ն բաղկացած է ազգի գոյապահպանման, ամբողջական Հայրենիքի, անկախ պետականության, ազգային մշակույթի և կրոնի հիմնադրույթներից: Ազգի, հայրենիքի, պետականության, մշակույթի և կրոնի գաղափարներն այն հիմնաքարերն են, որոնց վրա կառուցվում է ԱԳ-ի ամբողջ համակարգը:

ԱԳ-ն բաղկացած է ռազմավարական և մարտավարական ծրագրերից: Ռազմավարական ծրագիրը բաղկացած է ազգի գոյապահպանման, ամբողջական հայրենիքի, պետականության, մշակույթի և կրոնի հիմնադրույթներից: Այդ ծրագրում անհրաժեշտաբար իրենց պատշաճ տեղն են գրավում նաև յուրաքանչյուր ազգի պատմական ճակատագրից բխող առանձնահատուկ հիմնախնդիրները: Մարտավարական ծրագիրը տարբեր պատմական պայմաններում ռազմավարական ծրագրի հիմնախնդիրների լուծման ուղիների համակարգն է: Եթե այն չի ելնում պատմական իրականության բոլոր անհրաժեշտ գործոնների գիտական, վերլուծություններից, նրա մեխանիզմը չի գործում: Հետևաբար մարտավարական ծրագրի տապալմամբ չի իրականանում նաև ռազմավարական ծրագիրը: Ռազմավարական ծրագիրը կյանքի է կոչվում դարերի, իսկ մարտավարական ծրագիրը՝ պատմական ավելի կարճ ժամանակահատվածի համար:

Ցավոք, անկախության տարիներին ազգովին չըմբռնեցինք, որ ԱԳ-ի հիմնախնդիրը ժողովրդի գոյապահպանումն է, նրա ազատ, անվտանգ, բնականոն ու բազմակողմանի զարգացումը և ոչ թե համատարած թալանով զբաղվելը: Իսկ ազգը կենդանի օրգանիզմ է, պատմաէթնոհիկական հասկացություն: Յուրաքանչյուր ազգի գոյապահպանման համար անհրաժեշտ են՝ ինքնագիտակցություն, լեզու, մշակույթ, պատմական հիշողություն, բնավորություն, հոգեկան կերտվածք, նկարագիր, զգացում՝ ազգասիրություն, հայրենասիրություն և հպարտություն, ոգի, ընտանիք, կրոն, ճաշակ, կենցաղ, էթնիկական ավանդույթներ, սովորույթներ և այլն: Մասնագիտական գրականությունը ժողովուրդների պատմության, ազգային գաղափարախոսության մեջ բախտորոշ, վճռական դեր է հատկացնում հատկապես ազգային բնավորությանը, ազգային հոգեկերտվածքին և, ընդհանրապես, ազգային հոգեբանությանը: Անվիճելի է, որ պատմության փորձությունները հաղթահարելու, գոյապահպանման դարավոր կռիվից հաղթող դուրս գալու համար ազգը պետք է ունենա ուժեղ բնավորություն, հոգեկան կերտվածք և ազգային դիմագիծ: Մի կարևոր հանգամանք, որը հատկապես վերջին տարիներին մեզանում որևէ կերպ չդրսևորվեց:

Ասելիք շատ կա, սակայն ամփոփենք.

1. Հայոց գոյատևման և արժանապատիվ ընթացքի համար անհրաժեշտ է մի հիմնագաղափարային համակարգ, որի շուրջ կհամախմբվի ողջ ազգը: Դա ազգային գաղափարախոսությունն է, որը պետք է հստակ սահմանի հայ ժողովրդի նպատակը և դրան հասնելու ուղիները:

2. Այն պետք է ընդունվի Հայրենիքի և Սփյուռքի բոլոր շերտերի կողմից, և անկախ այն հանգամանքից, թե ովքեր կլինեն իշխանության ղեկին՝ ենթակա լինի պարտադիր կատարման:

3. Ցանկացած շեղում այդ հիմնակետից պիտի ենթադրի պատասխանատվություն և պատիժ, ինչպես որ աշխարհի շատ երկրներում է:

4. Միշտ պետք է հստակ գիտակցվի ազգային ռազմավարությունը և մարտավարական բոլոր քայլերը որոշակի ժամանակի և պայմաններին համապատասխան ուղղվեն այդ հիմնանպատակի իրականացմանը:

Նոր տարվա և Սուրբ ծննդյան տոների պայմաններում ծանր ու դժվարամարս հողված ստացվեց, սակայն կարծում եմ, որ հենց հեշտին վազելով ենք հասել այս ցավոտ հանգրվանին: Հետևապես սթափվելու և դժվարություններից չխուսափելով արժանավայել առաջ ընթանալու ճիշտ ժամանակն է: Առանց վարանելու հարկավոր է հայրենասիրական և աստվածահաճո քայլերով շարժվենք դեպի լուսավոր սպազա...

Сдана / Հանձնվել է՝ 10.02.2025  
Рецензирована / Գրախոսվել է՝ 14.02.2025  
Принята / Ընդունվել է՝ 19.02.2025